


ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռոբերտ Հովսեփի Ավագյանի 80-ամյակը



Լրանում է հայ անվանի ֆիզիկոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզիկոսների Հայկական ընկերության նախագահ, Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի գլխավոր մասնագետ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր-դոկտոր Ռոբերտ Հովսեփի Ավագյանի ծննդյան 80 և գիտ-մանկավարժական գործունեության 55 տարին:

Ռոբերտ Հովսեփի Ավագյանը ծնվել է 1931թ. մարտի 28-ին, Երևանում: 1954թ. համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետն ավարտելուց հետո նա անցնում է աշխատանքի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնում որդես լաբորանտ: 1957թ. նա ընդունվում է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան՝ Արսեն Իսահակի Ալիխանյանի ղեկավարությամբ: 1959թ. նա գործուղվում է Մոսկվա (ԼՁՈՂ), որտեղ աշխատում է ակադեմիկոս Աբրահամ Իսահակի Ալիխանովի ղեկավարության տակ: Դրանից հետո սափրիչ հայտնագործությունների տարիներ էին: Ռ. Ավագյանն իրեն հասուկ եռանդով ու նվիրվածությամբ մասնակցում է Ա.Ալիխանովի լաբորատորիայում կատարվող հետազոտություններին և ստանում նոր արդյունքներ, որոնք հետագայում հաստատվում են հոլանդացի գիտնականների կողմից: Հենց այդ արդյունքների հիման վրա Ռ.Ավագյանը 1965 թ. դառնում է իր թեկնածուական թեզը:

Երևանի էլեկտրոնային սինթրոտրոնի կառուցման կադակցությամբ, Ռ.Հ. Ավագյանը ղեկավարում է բևեռացված ֆոտոնային փնջերի ստեղծման աշխատանքները:

Սկսած 1975թ. Ռ.Հ.Ավագյանը իրականացնում է մի շարք կարևոր գիտափորձեր նուկլոնային ռեզոնանսների հետազոտման վերաբերյալ:

1978թ. Ռ.Հ.Ավագյանը Ստենֆորդի SLAC գծային արագացուցչի վրա կատարում է հետազոտություններ ամասի միաբյուրեղում բարձր էներգիաների կանալացված ղողճերի ճառագայթման վերաբերյալ: Ստացված արդյունքների մի մասը հիմն հանդիսացավ նրա դոկտորական թեզի համար, որը նա դառնում է 1981թ.:

Հետագա տարիներին նրա ղեկավարությամբ իրականացվել են մի շարք կարևորագույն գիտափորձեր կանալացման դայնամիկայում էլեկտրոնների ճառագայթումը հետազոտելու վերաբերյալ:

1987թ. Ռ.Հ.Ավագյանը կատարում է հաջողված գիտափորձ նոր սիմի ճառագայթում բացահայտելու ուղղությամբ (Զվազիչերենկովյան ճառագայթում, PXR), որը բացում է նոր հեռանկարներ ռենտգենյան ֆոտոնների մոնոֆրոմաշիկ աղբյուրներ ստեղծելու ուղղությամբ:

Վերջին տարիներին Ռ. Ավագյանը հանձն է առել Հայաստանում կատարել միջուկային բժշկության կենտրոնի ստեղծման աշխատանքները: Նրա նախաձեռնությամբ մշակվել են գծային արագացուցչների հիման վրա սեխնեցիում-99-ի (99Tc) ստացման նոր սեխնուղղիաներ:

Ռ.Ավագյանի նախաձեռնությամբ ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել Բելգիայից գնել Cyclone 18 արագացուցիչ, որը կօգտագործվի կյանքի շահ կարճ սևողություն ունեցող ռադիոնուկլիդներ ստանալու համար: Վերջիններս օգտագործվում են ղողճերումային էմիսիոն տոնոգրաֆով չարորակ ուռուցքների ախտորոշման համար:

Ներկայումս նա ղեկավարում է Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայում նոր իոնային արագացուցչի ստեղծման աշխատանքները, որը կունենա շահ կարևոր նշանակություն Հայաստանում միջուկային բժշկության և միջուկային ֆիզիկայի հետագա զարգացման համար:

2000թ. Ռ.Հ.Ավագյանի կողմից նախատեսվել են նոր առաջարկություններ Երզրանային բևեռացված ֆոտոնային փնջերի ստեղծման վերաբերյալ E-159, E-160 և E-

161 (SLAC, Ստենֆորդ, ԱՄՆ) գիտափորձերում:

1989թ.-ից Ռ.Ավագյանը Հայաստանի ֆիզիկոսների ընկերության նախագահն է: 1999թ. Ռ.Հ.Ավագյանը Լոնդոնի ֆիզիկայի ինստիտուտի կողմից ընտրվել է որդես Եվրոպայի Արտոնյալ ֆիզիկոս: Նա հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, որոնցից շատերը լայն ճանաչում ունեն: Ռ.Ավագյանը դասախոսել է բազմաթիվ երիտասարդ ֆիզիկոս-փորձարարների, որոնք այսօր մեծ հաջողությամբ աշխատում են աշխարհի խոշոր գիտական կենտրոններում:

Հղելով ջերմ շնորհավորանքներ ծննդյան 80-ամյակի կադակցությամբ, Ռոբերտ Ավագյանին մաղթում ենք առաջադիմություն, ստեղծագործական անստառ եռանդ և գիտական նորանոր նվաճումներ:

ՈՍԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
ՅՈՒՐԻ ՉՈՒԽԿԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի,
աստղաֆիզիկայի
բաժանմունքի ակադեմիկոս-
փրոֆեսոր